**Արձանագրություն 2**

**ՀՀ ՖՆ կարիքների համար « ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.03.2019թ. ժամը 13:00-ին:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ՝***

**Է. Պողոսյան** - ՀՀ ֆինանսների նախարարության գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ (նախագահ) ԳՊ/ԳԱ,

**Ա. Մարտիրոսյան** - ՀՀ ֆինանսների նախարարության գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի պետ ԳՊ/ԳԱ,

**Մ. Միքաելյան** - ՀՀ ֆինանսների նախարարության գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ,

**Ա. Գրիգորյան** - ՀՀ ֆինանսների նախարարության գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ,

**Գնումները համակարգող**

**Լ. Սահակյան՝** ՀՀ ՖՆ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ

**Բացակայում է**

**Մ. Սարգսյան** - ՀՀ ֆինանսների նախարարության գործերի կառավարման վարչության պետ ԳՊ/ԳԱՊ

**1. <u>Տեղեկություններ հայտերի բացման մասին</u>**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 13:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

**2. <u>Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին</u>**

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «**ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-19/2**» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| **Մասնակցի անվանումը** | **Տվյալները** |
|---|---|
| "Մադոյան" ՍՊԸ | ՀՎՀՀ 03021925 , էլ.հասցե. nerses@madoyan.am |
| «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ | ՀՎՀՀ 03528195, էլ.հասցե. sy.ru.ma@yandex.ru |
| Ա/Ձ Արմեն Հասանյան | - |
| ԱՐՄԱՆ ԿԱԴԱԼՅԱՆ ՎԱԼԵՐԻԻ Ա/Ձ | ՀՎՀՀ 81832425, էլ.հասցե. akadalyan@gmail.com |
| «ԷԼԵԿՏՐԻԿԱ ԳՌՈՒՊ» ՍՊԸ | ՀՎՀՀ 02633964, էլ.հասցե. liana.electrika.ru |
| Շուշան Տեխնիկս ՍՊԸ | ՀՎՀՀ 01569235, էլ.հասցե. karlos.baghramyan@gmail.com |
| ԷՔՍՏՐԱ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ | ՀՎՀՀ 01289245, էլ.հասցե. extra.holding@mail.ru |
| «ՎՈԼՖ ՇԻՆ» ՍՊԸ | ՀՎՀՀ 01285012, էլ.հասցե. wolf.shin.llc.arm@gmail.com |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

**3. <u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>**

Վերոնշյալ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ «ԷԼԵԿՏՐԻԿԱ ԳՌՈՒՊ» ՍՊԸ-ի, որը չի ներկայացրել հրավերի պահանջներին համապատասխան հավելված 2-ը, ինչպես նաև Արմեն Հասայան Ա/Ձ-ն, որը չի ներկայացրել հրավերով սահմանված համապատասխան փաստաթղթերը՝ հավելված 1,2, 2.1, 3, 4 և 5:

**4. <u>Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը</u>**

ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում է ստորև.

| Չ/Հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ) | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | "Մադոյան" ՍՊԸ | | | «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ | | | Արման Կադալյան Վալերիի Ա/Ձ | | | «ԷԼԵԿՏՐԻԿԱ ԳՌՈՒՊ» ՍՊԸ | | | Շուշան Տեխնիկս ՍՊԸ | | | ԷՔՍՏՐԱ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ | | | «ՎՈԼՖ ՇԻՆ» ՍՊԸ | | |
| | | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին |
| 1 | Բարձր ամրության թելեր **/նախահաշվային գինը՝ 5000 դրամ/** | | | | 5950 | 1190 | 7140 | | | | | | | | | | | | | | | |
| 2 | Էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W**/նախահաշվային գինը՝ 100000 դրամ/** | | | | 72500 | 14500 | 87000 | | | | | | | | | | | | | 81500 | 16300 | 97800 |
| 3 | Տնտեսող լամպեր **/նախահաշվային գինը՝ 350000 դրամ/** | 245700 | 49140 | 294840 | 164500 | 32900 | 197400 | | | | 247916 | 49583 | 297500 | | | | 238 000 | 47 600 | 285 600 | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Տնտեսող լամպեր **/նախահաշվային գինը՝ 130000 դրամ/** | 122850 | 24570 | 147420 | 48425 | 9685 | 58110 | | | | | | | 127800 | - | 127800 | 81900 | 16380 | 98280 | | | |
| 5 | Տնտեսող լամպեր **/նախահաշվային գինը՝ 260000 դրամ/** | 522000 | 104400 | 626400 | | | | | | | 166666 | 33333 | 200000 | | | | | | | | | |
| 6 | Ցերեկային լամպ 120սմ/**նախահաշվային գինը՝20000 դրամ/** | 27450 | 5490 | 32940 | 22000 | 4400 | 26400 | | | | | | | | | | | | | | | |
| 7 | Մեկուսիչ ժապավեն **նախահաշվային գինը՝7200 դրամ/** | | | | 4650 | 930 | 5580 | 6980 | - | 6980 | | | | 7200 | - | 7200 | 4500 | 900 | 5400 | 5220 | 1044 | 6264 |
| 8 | Էլեկտրական երկարացման լար **նախահաշվային գինը՝120000 դրամ/** | 108540 | 21700 | 130248 | 121750 | 24350 | 146100 | 8880 | - | 88880 | | | | 118200 | - | 118200 | 72000 | 14400 | 86400 | 134700 | 26940 | 161640 |

Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն, որ 1-ին, 6-րդ, 8-րդ չափաբաժինների մասով «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ -ի, 4,5, 6 և 8-րդ չափաբաժինների մասով "Մադոյան" ՍՊԸ-ի և 8-րդ չափաբաժնի մասով «ՎՈԼՖ ՇԻՆ» ՍՊԸ կողմից ներկայացված ներկայացված գնային առաջարկները գերազանցում են առկա ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ծանուցել «ԷԼԵԿՏՐԻԿԱ ԳՌՈՒՊ» ՍՊԸ -ին 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հավելված 2-ը:
2. Մերժել Արմեն Հասայան Ա/Ձ-ին՝ գնային առաջարկի բացակայության հիմքով և "Մադոյան" ՍՊԸ-ին 8-րդ չափաբաժնի մասով, քանի որ ԱԱՀ-ն սխալ է լրացված և սյունակների գումարը հավասար չէ ընդհանուր առաջարկված գնային առաջարկին:
3. ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշման 40-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գների նվազեցման նպատակով Ընթացակարգի 1-ին, 6-րդ չափաբաժինների մասով կազմակերպել բանակցություններ «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ի, իսկ 6-րդ չափաբաժնի մասով "Մադոյան" ՍՊԸ-ի հետ 10 րոպե տևողությամբ 2019 թվականի մարտի 14-ին՝ ժամը 12:00-ին:
4. Ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչել «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ-ին, 5-րդ չափաբաժնի մասով՝«ԷԼԵԿՏՐԻԿԱ ԳՌՈՒՊ» ՍՊԸ-ին, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով՝ ԷՔՍՏՐԱ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ-ին:
5. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:
6. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ԷՔՍՏՐԱ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ -ի, «Սյ.Ռու.Մա» ՍՊԸ -ի և `«ԷԼԵԿՏՐԻԿԱ ԳՌՈՒՊ» ՍՊԸ -ի հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

## 5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>

**ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-19/2** ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ս/թ մարտի 13-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

հանձնաժողովի անդամներ՝ _______________ Է. Պողոսյան

_______________ Ա. Մարտիրոսյան

_______________ Մ. Միքաելյան

_______________ Ա. Գրիգորյան

Գնումները համակարգող ՝ _______________ Լ. Սահակյան